

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ «ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՄԱՏԵՆԱԾԱՐԻ ԵՐՋԱՆԱԿՈՒՄ

Եւա Սնացականեան

Յովհաննէս Թումանեանի մանկագրութեան մասին խօսելիս յատուկ պէտք է անդրադառնալ «Մանկական գրադարան» մատենաշարին: 1908 թ. նոյեմբերից իշխանուհի Մարիամ Թումանեանի նախաձեռնութեամբ առանձին գրքոյկներով, գեղեցիկ նկարազարդումներով թողարկուած են Յովհաննէս Թումանեանի մանկական ստեղծագործութիւնները: Բարեխնամ իշխանուհու նախաձեռնութիւնը եւ բարձր ընդունելութիւնը վկայում են բանաստեղծի մանկական երկերը սիրուած ու սպասուած էին եւ բացառիկ տեղ ունէին ժամանակի՝ օրըստօրէ նորագոյն մշակութային կեանքում: Բոլոր գրքոյկները անխտիր արժանանում են քննադատութեան, մանկավարժների եւ առհասարակ շահագրգիռ մտաւորականութեան ուշադրութեանը: Այդ արձագանքների մի մասը աչքի է ընկնում բանիմաց ու խորքային վերլուծութիւններով, միւսը՝ առաւել մասնաւոր կամ մակերեսային բնութագրումներով:

Առաջին գրքոյկը «Շունն ու Կատուն»<sup>1</sup> էր, որ վաղուց արդէն դարձել էր

մանուկների սեփականութիւնը եւ անմահութիւն կանխորոշել բանաստեղծի համար:

Նոյեմբերի 23-ին Լեւոն Շանթը, նկատի ունենալով նոր տպագրուած գունազարդ գրքոյկը, Յովհ. Թումանեանին գրում է. ««Շունն ու Կատուն» այս վերջին յաղթանակը տօնում եմ քեզ հետ: Ինչ կ'ուզես ասա, աշխարհքս շունն ու կատուններինն է, աւելի ազնիւ տեսակի անասունները բանի պէտք էն գալի, ինչ երջանիկ օր է եղել այն օրը, երբ գլուխդ յղացել է շան ու կատուի այդ նշանաւոր մենամարտը... ախր, շատ է մեր խալխի հոգոցն ու էութիւնիցը...»<sup>2</sup>:

Լ. Շանթն այս դիտարկմամբ, որքան մեզ յայտնի է, առաջինն է, որ Թումանեանի այս արտասովոր ստեղծագործութեան ենթատեքստում նկատում է մանկականից շատ աւելի խոր ու տարողունակ մարդկային-բարոյական բովանդակութիւն. դեռ պատանի բանաստեղծը խորաթափանցօրէն կռահել է, որ շան ու կատուի յաւերժական հակամարտութեամբ ժողովուրդը իր վերաբերմունքն է արտայայտել մարդկային իրական յարաբերութիւններում տիրող

1 Յայտնի է, որ «Մուրճի» խմբագիր Ա. Արասխանեանը մերժել էր «Շունն ու Կատուն» տպագրել հանդէսում՝ ասելով. «Շուն ու կատուն եւ բանաստեղծութիւն, սրանք ի՞նչ կապ ունեն իրար հետ, էն էլ էս տեսակ վայրենի լեզուով (Յ. Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու*, հտ. 2, Երեւան, 1991, էջ 549): Ռ. Իշխանեանը Արասխանեանի այս արձագանքի առիթով գրում է. «Արեւելահայոց չափածոյի այն ժամանակուայ լեզուական որակի (պատկանեանական-շահագրգիռ) զգացողութիւնը այնպիսի տիրապետող դիրք ունէր, որ անհնար էր

տարուած այս աստիճանի շեղումը հայ պարբերականի խմբագրին լեզուական հերետիկոսութիւն թուաց: Նա, իհարկէ, չէր կարող գուշակել, որ գրկում էր իրեն բացառիկ առիթից՝ առաջին հրապարակողը լինելու այն երկի, որը շուտով սիրելի պիտի դառնար հազարատոմս մանուկ ու տարիքով, գրագէտ ու անգրագէտ հայախօս մարդկանց...» (Թումանեանի լեզուի զարգացման ուղի, Բանբեր Երեւանի համալսարանի, թիւ 1, Երեւան, 1977, էջ 33):

2 Յ. Թումանեան. *Ուսումնասիրութիւններ եւ հրապարակումներ*, հտ. 4, Երեւան, 1985, էջ 379-380:

էթիկական արժէքների հանդէպ. մի բացառիկ փրկիտփայական հանրագումարի մէջ դատապարտել է շողոքորթութիւնը, կեղծաւորութիւնը, երդմնազանցութիւնն ու պարտազանցութիւնը, որոնք մշտական ուղեկիցներն են մարդկային կեցութեան: Բալլադի մասին պարզ, բայց եւ մարգարէական խօսքեր է հնչեցնում Անդրանիկը: Մի մտերմիկ հաւաքոյթում, ի պատասխան Թումանեանի մեծաշունչ կենացի, զօրավարը ասում է. «Կ'անցնեն տարիներ, ո՛չ ես կը լինեմ, ո՛չ էլ Թումանեանը, բայց կը լինի մի նշանաւոր բան՝ «Շունն ու Կատուն», խմենք նրա կենացը»<sup>3</sup>:

Նոյեմբերի 21-ին «Մշակում» տպագրուած է Ա. Նազարէթեանի գրախօսութիւնը՝ նուիրուած այս գողտրիկ, խորիմաստ ստեղծագործութեանը: Գրախօսը խիստ կարեւորում է մանկական գրքերի թե՛ բովանդակութիւնը, թե՛ արտաքին տեսքը եւ այդ տեսանկիւնից բարձր գնահատում գրքոյկը: «Աւելորդ է խօսել «Շունն ու կատուն» ոտանաւորի արժանիքների մասին, վստահաբար նկատում է նա: Ո՞վ չգիտէ, թէ մանուկները որպիսի յափշտակութեամբ են կարդում եւ շուտ-շուտ բերանացի սովորում վերոյիշեալ ոտանաւորը եւ որպիսի բաւականութիւն եւ զուարճութիւն է պատճառում նրանց շան եւ կատուի դերակատարումը»<sup>4</sup>: Գրախօսի համոզմունքն է՝ «Շունն ու Կատուն» մանուկներին տրուելիք ամենալաւ «ընծայարգեւն» է եւ մանկական գրադարանի «ամենալաւ զարդը»:

Օրեր անց «Հովիւ» ամսագրի հմ. 45-ում տպագրուած է Ս. Մանդինեանի մատենախօսութիւնը, որն աչքի է ընկնում հակասական դիտարկումներով: Ողջունելով «Շունն ու Կատուն» գրքոյկի լոյսընծայումը եւ համաձայնուելով, թէ բալլադն «արդէն իսկ յայտնի գոհար էր համարուած մեր գրականութեան մէջ», քննութեան նիւթ է դարձնում մայրենի լեզուն երեխաներին սիրելի ու հարազատ դարձնելու խնդիրը եւ հայ մանկավարժների ոչ ճիշտ մօտեցումը կրթութեան ու դաստիարակութեան հարցին: Մտահոգիչ է յատկապէս այն, գրում է նա, որ հայ մանկավարժները յաճախ նախընտրում են օտար ազգութիւնների լեզուն ու գրականութիւնը՝ իբրեւ փոքր ազգերի փրկօղակ: «Նորերս հրապարակի վրայ դրուեցաւ այս դիւնաման, շարունակում է մանկավարժը,՝ արդեօք գերմանական «Ֆունդըֆորդը» թէ հայկական «Շունն ու կատուն» անուցիչ համարենք մեր մանուկների համար, եւ գտնուեցան պետագոյններ, որոնք արիութիւն ունեցան Պեշիկթաշլեանի անձկութիւնը «թթու ազգասիրութիւն» հռչակել եւ «Ֆունդըֆորդը»-ները դրախտի դուռ համարել մեր մանուկների կրթութեան համար: Թթու ազգասիրութի՞ւն... Արդեօք շարունակական շրջիկ բառերը չեն քանդել մեր տունը»<sup>5</sup>: Այս հարցում Մանդինեանը իսկապէս իրաւացի էր: Բայց ահա իր դիտարկումների վերջում անդրադառնում է Աղայեան-Թումանեան յարաբերութիւններին<sup>6</sup>, փորձում «Լուսաբերի» եւ Թումանեանի հանդէպ իր ոչ այնքան

3 Թումանեանը ժամանակակիցների յուշերում, հտ. 1 (Լրամշակում հրատարակութիւն), Երեւան, 2019, էջ 139:

4 «Մշակ», թիւ 259, Թիֆլիս, 1908:

5 «Հովիւ», թիւ 45, Թիֆլիս, 1908, էջ 718:

6 Աղայեան-Թումանեան յարաբերութիւններին Մանդինեանը անդրադարձել էր նաեւ մեկ այլ՝ «Լուսաբեր» դասագրքին վերաբերող գրախօսութեան մէջ («Հովիւ», թիւ 28, Թիֆլիս, 1908): Ըստ գրախօսի՝ ակատելի է «ողբալի երեսոյթ» «Լուսաբերի» մէջ Աղայեանի ստեղծագործութիւններից

չկան: Ենթադրում է, որ Աղայեանն էլ, ի պատասխան, իր ընթերցարանում չի գետնել Թումանեանի գործերից: Ս. Մանդինեանը մտերիմ բարեկամների յարաբերութիւնը անուանում է «Մոնտեկի եւ Կապուլետեան» կոչի եւ եզրակացնում, որ մեկը միսին «վնդելով»՝ դպրոցը «գուրկ է մնում ազգային գրականութեան ամբողջութիւնից»: Նման կարծիքներ երբեմն հնչում էին, սակայն դրանք անհիմն էին եւ չէին ազդում երկու մեծերի անկեղծ, իր տեսակի մէջ հազուադէպ բարեկամութեան վրայ: Չ. Տեր-Գրիգորեանն իր

Համակրական վերաբերմունքը քողարկել այն մտահոգութեամբ, թէ ինչպէս «Լուսաբերը», այնպէս էլ Ղ. Աղայեանի «Արեւիկը» կը շահէին, եթէ երկուսում էլ իրենց լաւագոյն գործերով հաւասարապէս ներկայացուած լինէին եւ՝ Թումանեանը, եւ՝ Աղայեանը: Մանդինեանի այս մտահոգութիւնը որոշ չափով նաև անձնական ենթատեքստ ունէր. ինքն էլ, դասագրքի հեղինակ, ամենից առաջ անհանգստանում էր գրքի ճակատագրի համար:

«Մանկական գրադարան» մատենաշարը շարունակում է Թումանեանի ստեղծագործութիւնների նոր հրատարակութիւնները: «Մշակը» իր հմ. 290-ում տեղեկացնում է. «Ստացանք իշխանուհի Մ. Թումանեանի հրատարակութեամբ լոյս տեսնող հետեւեալ պատկերազարդ գրքոյկները (Մանկական գրադարան). 1) «Աղուեսը» գ. 15կ., 2) «Ուլիկը» գ. 15կ., 3) «Անյաղթ աքլորը» գ. 15կ., 4) «Ծիտը» գ. 15կ.

եւ 5) «Անբախտ վաճառականներ» գ. 35կ.: Բոլորն էլ պատկանում են Յովհ. Թումանեանի գրչին: Վերոյիշեալ բոլոր գրքոյկները թե՛ իրանց շքեղ արտաքինով եւ թե՛ բովանդակութեամբ ու լեզուով միանգամայն լինելու են ամեն մի ընտանիքի մանկական գրադարանի համար ամենաընտիր գարդերը: Խորհուրդ եւք տալիս այլեւայլ անմիտ խաղալիքների եւ ընծաների տեղ պարզեւատրել մանուկներին այդպիսի շքեղ ու ընտիր մանկական գրքոյկներով, որոնց գներն էլ անհամեմատ էժան են»<sup>7</sup>: Հեշտ է նկատել, որ թերթը, բարձր գնահատելով երեւոյթն ինքնին, այնուամենայնիւ խուսափում է գրքոյկների բովանդակութեան մասին որեւէ կարծիք յայտնելուց. թերթի խմբագրի եւ Թումանեանի միջեւ տեւական հակամարտութիւնը դեռ շարունակում էր<sup>8</sup>:

Մամուլի այս գովասանական յայտարարութիւնները իրենց գործը կատարում

շում եմ այն օրերը, երբ հայրիկդ միացաւ Լիսիցեանի հետ «Լուսաբերի» համար. դա մի կոնկուրենցիայ էր, որը սաստիկ ազդեց պապի նիւթականի վրայ, չէ՞ որ նախանձողներ էլ կային այդ բարեկամութեանը: «Էդ էլ քո Յովհաննէսը», - ասում էին նրանք: «Թող, ոչինչ, երեխաներ շատ ունի, մեղք է, ես նրան չէի կարողանայ ասառու վել», - պատասխանում էր նրանց պապէն: Մի օր էլ եկաւ հայրիկդ եւ ասաց պապին. «Լիսիցեանը պահանջում է, որ ես բոլոր գրուածքներս հանեմ քո դասագրքից, բայց ես նրան մերժեցի, ասացի. «Աւելի շուտ ես «Լուսաբերից» կը հրաժարուեմ, քան թէ էդպէս բան կ'անեմ: Պապէն գրկեց նրան, արտասուեց» (Յ. Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 10, էջ 460):

7 «Մշակ», թիւ 290, Թիֆլիս, 1908:  
8 Յ. Առաքելեան - Յ. Թումանեան հակասութիւնը սկսուել էր դեռեւս 1910-11 թթ.: կապուած կաթողիկոսական ընտրութիւնների հետ (տե՛ս Լ. Կարապետեան, *Դրուագներ Թումանեանի հասարակական գործունէութիւնից, - Թումանեան. ուսումնասիրութիւններ եւ հրատարակումներ*, հտ. 4, էջ 69-128): Յատկապէս 1914 թ. Հ. Առաքելեանի ղեկավարութեամբ թերթի էջերում Հայ գրողների ընկերութեան դէմ սկսում է մի «արշաւանք»: Առիթը Յ. Առաքելեանի «Դուք անբարոյականացնում էք մատաղ սերունդը» առաջնորդող

յուշերում գրում է. «Ծիշտ է, Թումանեանի, Լիսիցեանի ու Ծանթի միացեալ ուժերով կազմած «Լուսաբեր» դասագրքերը մի փոքր կոտրեցին Ղ. Աղայեանի սիրտը՝ որոշ չափով ստուեր գեղով նրա «Ուսումն մայրեանի լեզուի» դասագրքերի վրայ, ասպարէզից համարեալ դուրս մղեցին նրանց, բայց նա երբեք ո'չ մի անբարեացակամ դիտողութիւն չարաւ «Լուսաբերի» մասին, ինչպէս ընդունում էր նման դէպքերում մեր դժբախտ իրականութեան մէջ: Նա միայն ասում էր. «Առանց Յովհաննէսի նրանք չէին կարող այդպիսի դասագրքեր կազմել: Լեզուն, ոճը, գրական մշակումը, ֆոնկտորից վերցրած ու ճաշակով մշակած համով-հոտով միջերը ամբողջովին Յովհաննէսինն են: Լիսիցեանը մեթոդական աշխատանք է տարել, իսկ Ծանթը լոկ թարգմանութիւններ է արել երոպական գրականութիւնից» (Թումանեանը ժամանակակիցների յուշերում, հտ. 1, էջ 392): Աղայեանի դատը՝ Լուսիկ Սարեանի՝ Նուարդ Թումանեանին 1939 թ. մայիսի 4-ին ուղղած նամակում կան այսպիսի տողեր. «Դու գրում ես նրանց (Թումանեանի եւ Աղայեանի) բարեկամութեան մասին, բայց դա մի ուրիշ տեսակ բարեկամութիւն էր, հայրը իր զաւակին այնպէս չէր սիրում, ինչպէս պապէն էր սիրում հայրիկիդ: Յի-

են: Նոր տպագրուած գրքոյկները անմիջապէս արժանանում են ոչ միայն մանուկ ընթերցողների, այլեւ մանկավարժների ու գրաքննադատների ուշադրութեանը:

Իհարկէ, Թումանեանի՝ իբրեւ ժողովրդական լաւագոյն բանաստեղծի անունն արդէն յայտնի էր ե՛ւ գրական շրջաններում, ե՛ւ հասարակութեան մէջ. նորութիւնը նրա մանկական երկերի առանձին գունագարդ ու շքեղ հրատարակութիւնն էր, որ մեկ անգամ եւս կարծես պահանջում էր ուշադրութիւն: «Հովիւ» շաբաթաթերթի հմ. 3-ում Գ. Դ. ստորագրութեամբ հեղինակը ողջունում է գրքոյկների հրատարակութիւնը եւ յոյս յայտնում որ «ամեն կողմից գեղեցիկ այդ գրքոյկները հայ հասարակութեան մէջ լայն ընդունելութիւն կը գտնեն եւ իրաւամբ կը զարդարեն ամեն մի հայ ընտանիքի սեղանը»<sup>9</sup>:

Ծաւալուն եւ լուրջ յօդուած է տպագրուում 1909 թ. «Գործ» թերթի հմ. 29-ում: Ա. ստորագրութեամբ գրախօսը, որ ամենայն հաւանականութեամբ Աւետիս Ահարոնեանն է, ասելիքն սկսում է հետեւեալ նախադասութեամբ. «Մեր մանկական գրականութեան ամենաթանկագին գոհարներն են Ղ. Աղայեանի եւ Հ. Թումանեանի մի շարք գրուածքները»<sup>10</sup>: Ապա անդրադառնում է մանկան կրթութեան խնդրին՝ կարեւորելով ընթերցանութեան նշանակութիւնը մինչեւ 10-12 տարեկան երեխաների դաստիարակութեան եւ անհատականութեան ձեւաւորման համար: Այս դիտանկիւնից էլ հեղինակը բարձր է գնահատում «Մանկական գրադարան» մատենաշարի յաջորդ գրքոյկները՝ «Անյաղթ աքլորը», «Ծիտը», «Ան-

բախտ վաճառականներ», «Ուլիկը», «Աղուեսը»: Գրախօսը Յովհ. Թումանեանին համարում է «առաջնակարգ, ընտիր գրող», որի առակները եւ լեզենդները հայերէնի դասագրքերում «անփոխարինելի գոհարներ են, մանկական հոգուն եւ սրտին մօտիկ, ընտանի խօսքեր»: Մանկական գրականութեան մէջ, ըստ նրա, Թումանեանը գերազանցում է անգամ Ղ. Աղայեանին: Որո՞նք են ուրեմն այն յատկանիշները, որ առանձնայատուկ են դարձնում Թումանեան մանկագրին:

Յօդուածագիրը նախ մատնանշում է այն փաստը, որ բանաստեղծն իր ստեղծագործութիւնների սիւժէները վերցնում է կեանքից, հայ իրականութիւնից: Նիւթի հարազատութիւնը առաւել ընդգծւում է պարզ ու վճիտ լեզուի միջոցով: «Պարզ, մաքուր լեզուն մանկական գրուածքների առաջնակարգ արժանաւորութիւններից մեկը պիտի համարել<sup>11</sup>, - շարունակում է գրախօսը եւ ընդգծում երրորդ առանձնայատուկութիւնը՝ առակների եւ լեզենդների չափածոյ լինելը: Այդ հանգամանքը, ինչպէս բացատրում է գրախօսը, մատչելի է դարձնում նիւթը. «Այս դէպքում երեխաները աւելի եւս հեշտութեամբ են իւրացնում նիւթը. առանց որեւէ նեղութեան նրանք անգիր են սովորում բաւական մեծ հատուածներ. կարգացածը շատ խորն է տպաւորւում մանուկների գիտակցութեան մէջ»<sup>12</sup>: Իբրեւ առաւելութիւն յօդուածի հեղինակը շեշտում է այն, որ Թումանեանի հեքիաթները ֆանտաստիկ չեն. «Ժողովրդական լինելով հանդերձ պարունակում են

յօդուածն էր. Թումանեանը մեղադրում էր Հայ գրողների ընկերութեան կազմակերպած գրական միջոցառումներին աշակերտներին մասնակից դարձնելու մէջ: Անհիմն մեղադրանքներ հնկից դարձնելու մէջ: Անհիմն մեղադրանքներ հնկից դարձնելու ու սուր բանավեճեր ծաւալելով՝ «Մշակը» չէր առաջադրում գեղագիտական խնդիրներ

եւ կառուցողական ծրագրեր: Աւելին, Հ. Առաքելեանը պնդում է, որ քննադատում է Թումանեանին՝ «իբրեւ մարդու» եւ ոչ բանաստեղծի:  
9 «Հովիւ», թիւ 3, Թիֆլիս, 1909, էջ 47:  
10 «Գործ», թիւ 29, Թիֆլիս, 1909:  
11 Նոյն տեղում:  
12 Նոյն տեղում:

իրենց մէջ բարոյական բարձր սկզբունքներ, խրատական գաղափարներ»<sup>13</sup>: Գրախօսն այն հաստատ համոզմունքին է, որ յատկապէս տարրական օղակում դասական ուսուցիչը ըստ արժանւոյն գնահատած կը լինի Թումանեանի մանկական երկերի նշանակութիւնը եւ «Հոգեկան բաւականութեամբ դիտած կը լինի, թէ ինչպէս երեխաները սիրով, հաճութեամբ են սովորում Թումանեանի ոտանաւորները եւ հատուածները - նրա «Անբախտ վաճառականները», «Գառնիկ ախպերը», «Շունն ու Կատուն», «Յոպոպի ծագումը», «Արծիւն ու կաղնին»<sup>14</sup>: Աւելին, յաճախ աշակերտները, առանց սպասելու ուսուցչի հրահանգին, ինքնաբերաբար անգիր են անում նրա ստեղծագործութիւնները: Յօդուածագիրը գոհունակութեամբ արձանագրում է, որ ընդամենը մի քանի շաբաթ առաջ տպագրուած գրքոյկներն արդէն դարձել են հայ ընտանիքների գրադարանների զարդը, եւ 3-5 տարեկան երեխաները, որոնք դեռեւս գրաճանաչ չեն, «գրքոյկների նկարներին նայելով եւ ծնողներից առաջնորդուելով անգիր են արել եւ սիրով արտասանում են «Շունն ու Կատուն» եւ «Անբախտ վաճառականները» ամբողջապէս: Այս ցոյց է տալիս, թէ Թումանեանի գրքոյկները որպէս եւ որ աստիճան մանուկների քնքուշ սրտին ընտանի են եւ մատչելի»<sup>15</sup>:

Գրքոյկների տպագրութիւնը ողջունում է նաեւ Յ. Տէր-Միրաքեանը, որն իբրեւ մանկավարժ հետեւում էր մանուկներին հասցէագրուած ցանկացած նիւթի: Վերելում աւելի եղել է նկատելու, որ հեղինակը խիստ կարեւորում է՝ ինչ գրականութիւն է առաջարկում փոքրիկներին ու դեռահասներին: «Նոր դպրոցի» հմ. 6-7-ում տպագրուած գրախօսականում Տէր-Միրաքեանը

մտահոգուած արձանագրում է, որ հայ ընտանիքներում փառաւոր տեղ են գրաւել ուսական գրքոյկները: Մինչդեռ Թումանեանի «Աղուեսը», «Միտը», «Անյաղթ աքլորը» եւ «Ուլիկը» «ոչ միայն բարձր են այդ արտադրութիւններից, այլեւ կարող են մրցել ուսական աւելի արժանաւոր գրականութեան արտադրութիւնների հետ»<sup>16</sup>: Յ. Տէր-Միրաքեանը հակիրճ ներկայացնում է իւրաքանչիւր հեքիաթի էական յատկանիշը, որ սրտամօտ ու հարազատ է մանուկ ընթերցողին. «Աղուեսը» գրքոյկում կարեւորում է աղուեսի եւ աքլորատէր պառաւի տրագիկոմիկական «մենամարտը» ներկայացնող այն արտայայտիչ պատկերները, որոնք խիստ «ցայտուն կերպով ներկայացնում են այդ տրագիկական մոմենտը»: Արկածախնդիր ծախ «քաջագործութիւնները» 3-5 տարեկան մանուկների համար եւս հաւատալի եւ հետաքրքիր են, մանաւանդ երբ այդ արկածները ուղեկցւում են սազի «ծընգը, մընգը»-ով, երգելով: «Անյաղթ աքլորը» հեքիաթի հերոսը, ըստ Տէր-Միրաքեանի, երեխաների սրտի ուզած աքլորն է, որ թագաւորի կոկորդից անցնելիս ու նրա փորի մէջ ճամփորդելիս անգամ չի յուսահատուում: Թումանեանական ինքնատիպ հումորը զուարճութիւն է պարգեւում մանկանը: Բովանդակութեամբ եւ արտայայտութեան ձեւով նշուածներից բարձր է համարում «Ուլիկը»: «Հայկական «Ուլիկը»,- բացատրում է գրախօսը,- աւելի խելացի է դուրս եկել գերմանական եօթ ուլիկներից եւ զոհ չի գնացել ազահ գայլի խարդաւանքներին»<sup>17</sup>:

Այս բնութագիրը անուղղակիօրէն հաստատում է, որ գրախօսը ժողովրդական սիւժէների թումանեանական մշակումներում բարձրարժէքայնութեան ցուցանիշ է համարում ոչ միայն գեղեցիկ պատկերներ

13 Նոյն տեղում:  
14 Նոյն տեղում:  
15 Նոյն տեղում:

16 «Նոր դպրոց», թիւ 6-7, Թիֆլիս, 1909, էջ 115:  
17 Նոյն տեղում:

ըր, այլեւ ու առաջին հերթին դրանց բարոյադաստիարակչական, ուսուցողական ազդեցութիւնը: Իսկապէս, Թումանեանը այդպիսի որեւէ նիւթ մշակելիս, փոխադրելիս կամ թարգմանելիս մշտապես յարմարեցնում էր հայ ընթերցողի լեզուամտածողութեանը, հոգեբանութեանը, դարձնում հարազատ ու սիրելի:

Մանկավարժ գրախօսը ուշադրութիւն է հրաւիրում «Անբախտ վաճառականները» բալլադի վրայ, որ, ինչպէս նկատում է նա, ընթերցանութեան նիւթ կարող է լինել ոչ միայն նախադպրոցական տարիքի երեխաների, այլեւ դպրոցականների համար: Ընդգծւում է յատկապէս լեզուաարտայայտչական ձեւի համապատասխանութիւնը բովանդակութեանը, որ աւելի արտայայտիչ են դարձնում նկարները: «Անմեղութեան չքնաղ հեքիաթ» է անուանում «Գառնիկ ախպերը»: Սակայն առանձնացնում է յատկապէս «Շունն ու Կատուն», որ «առանց այն էլ արդէն մեծ ֆուրոր էր

առաջացրել մանկական աշխարհում»: Տէր-Միրաքեանը յստակ ընդգծում է, որ «Շունն ու Կատուն» այդ ժամանակ արդէն ընդունւում էր իբրեւ անմահ գլուխգործոց, եւ անմահացնողները հէնց երեխաներն էին:

Մանկավարժական տեսանկիւնից Տէր-Միրաքեանը անընդունելի է համարում Թումանեանի «էդպէսը»<sup>18</sup>, սակայն գրախօսութիւնն աւարտում է այն հաստատ համոզմունքով, որ գրքոյկները՝ «Իբրեւ մանուկների կենսական պահանջ, պէտք է առատօրէն նուիրուին նրանց»<sup>19</sup>:

«Մանկական գրադարան» մատենաշարը շարունակում է համայրուել. տպագրւում է «Գառնիկ ախպերը»<sup>20</sup>: «Հովիւ» շաբաթաթերթի աշխատակիցը՝ Գ. Դ. ստորագրութեամբ, ողջունում է «մեր ժողովրդական լաւագոյն բանաստեղծի»՝ Յովհ. Թումանեանի նաեւ այս գրքոյկը՝ դարձեալ այն համոզմամբ, որ հայ մարդը պէտք է սովորի անհմաստ ընծաների փոխարէն երեխային

18 1910 թ. «Հորիզոնում» տպագրուած «Մի Ակատորութիւն» յօդուածում եւս հեղինակ Մ. Ղազարեանը «Լուսաբեր» դասագիրքը կազմողներին առաջարկում է «էդպէս», «էնպէս»-ը փոխարինել գրական լեզուն ընդունուած ձեւերով (թիւ 92): Ի պատասխան այդ դիտողութիւնների՝ Թումանեանը բերում է մի շարք փաստարկներ՝ արդարացնելու «էս, էդ, էն»-ի գործածութիւնը: Նա առաջին հերթին մատնանշում է հոգեբանական պատճառը, ըստ որի՝ այդ բառերն աւելի հարազատ ու անկեղծ են հնչում ժողովրդի լսողութեանը: Միւս կարեւոր փաստարկն այն է, որ առաւել ընդունելի պէտք է համարել միլիոնատոմարդկանց կողմից գործածուող «էս, էդ»-ը, քան մի քանի հարիւր, մոյնիսկ հազար մարդկանց գործածած «այս, այդ»-ը: «Ես ժողովրդից եմ առնում իմ միտքերը եւ լեզուն ու նրա հետ էլ խօսում», - գրում է Թումանեանը: Նա միանգամայն համոզուած էր, որ ինքը քայլում է լեզուի զարգացման հետ, նրա բնական ճանապարհով (Յ. Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու*, հտ. 6, Երևան, 1994, էջ 470): «Թումանեանի լեզուի զարգացման ուղին» յօդուածում Ռ. Իշխանեանը գրում է. «այդ բառաձեւերի առկայութիւնը գրական խօսքի մէջ արդէն իսկ նուազեցնում է գրքային, լրագրային լեզուի

զգացողութիւնը, արհեստական «կեցուածքը», միանգամայն լեզուն դարձնում է աւելի սովորական, մօտ խօսակցականին: Դա անմիջապէս բխում էր Թումանեանի գեղագիտական համոզումներից ու հակումներից» (Բաղբեր Երեսմի համալսարանի, թիւ 1, Երևան, 1977, էջ 41):  
19 «Նոր դպրոց», թիւ 6-7, 1909, էջ 116:  
20 «Գառնիկ ախպերը» Ախպապէս ունեցել է ութտողանոց սկիզբ, որը մանկական մատենաշարում տպագրելիս բանաստեղծը հանել է: Խ. Գիւլմագարեանը նշում է, որ Ա. Իսահակեանը մի գրոյցի ժամանակ անգիր արտասանել է յիշեալ հատուածը, ապա աւելացրել, «թէ շատ բանաստեղծներ կը պարծենային այսպիսի անթերի տողերով, թէ միայն խոշոր բանաստեղծներն են ընդունակ այսչափ «դաժան» լինելու իրենց իրենց հանդէպ եւ յետագայ հրատարակութիւններից դուրս թողնելու այսքան գեղեցիկ տողերը՝ հասկանալով, որ, անկախ ինքնակալ արժեքից, սրանք մեր քան չեն աւելացնում հեքիաթի ընդհանուր իմաստին» (Թումանեան. *Մատնագիրութիւններ եւ հրատարակումներ*, հտ. 3, Երևան, 1983, էջ 81):

նուիրել մանկական գրքոյկներ, որոնց կրթադաստիարակչական նշանակութիւնը կասկածից դուրս է:

Մարիամ Թումանեանի՝ ԳԱԹ-ում պահպանուող արխիւում կան իշխանուհու ձեռքով հաւաքուած հայալեզու եւ ռուսալեզու թերթերի կտրօններ, որոնք փոքրիկ գրախօսութիւններ են «Մանկական գրադարանի», մասնաւորապէս Թումանեանի ստեղծագործութիւնների մասին: Դրանցից մեկում Ա. Բ-Գ. ստորագրութեամբ հեղինակը ոգեւորութեամբ ողջունում է Թումանեանի «Գառնիկ ախպեր» հեքիաթի տպագրութիւնը: Ուշագրաւ է հետեւեալ դիտարկումը. «Ընթերցող հասարակութիւնը ընդհանրապէս եւ մեր մանուկ ընթերցողները մասնաւորապէս վաղուց արդէն ըստ արժանւոյն գնահատել են Թումանեանի ստեղծագործութիւնները: Ո՞ր մանուկ ընթերցողը, ո՞ր դպրոցականը չէ իմանում, չէ փայփայում իր սիրելի ուսուցչին՝ Թումանեանին»<sup>21</sup>: Յօդուածագիրը բարձր է գնահատում հեքիաթի վարպետ մշակումը՝ անուանելով այն «ընտիր գործ» եւ կարեւորում է այն հանգամանքը, որ երեխաներն այս ստեղծագործութիւնից պիտի համոզուեն, որ բարին միշտ յաղթում է:

1909 թ. «Հորիզոնի» թիւ 56-ում տպագրւում է անստորագիր գրախօսութիւն՝ նուիրուած «Խօսող ձուկը» եւ «Տէրն ու ծառան» հեքիաթներին: Յօդուածագիրը յիշեցնում է, որ բոլոր քաղաքակիրթ ազգերը ընթերցանութեան նկատմամբ սէր արթնացնելու ամենադիւրին ճանապարհը համարում են գրաւիչ գրոյցները, հեքիաթները:

ընդ պատկերազարդ գրքոյկներով հրատարակելը: Փոքր ազգերի համար դա միջոց է նաեւ ազգային մտածողութեան եւ հոգեբանութեան մշակման, մայրենի լեզուի եւ շրջապատի իմացութեան: Այս տեսակէտից էլ բարձր է գնահատում պատկերազարդ գրքոյկներով հրատարակուած Թումանեանական հեքիաթները:

Մեկ այլ անստորագիր գրախօսութիւն տպագրւում է 1910 թ. «Տարազի» թիւ 3-ում, որ ենթադրւում է՝ պէտք է վերաբերէր «Խօսող ձուկը», «Տէրն ու ծառան», «Մի կաթիլ մեղր», «Գիքորը» գրքոյկներին: Ողջունելով Մարիամ Թումանեանի նախածեղծութիւնը՝ անանուն գրախօսը սխալ է համարում Թումանեանի երկերի վերահրատարակութիւնը՝ դա որակելով ծուլութեան խրախուսում: Անդրադառնալով միայն «Գիքորը» պատմուածքին՝ գրախօսը պնդում է, որ «լալկան, վհատեցնող» գրականութիւնը «պէտք է իսպառ ջնջել»: Քննադատութեան թիրախ է դառնում նաեւ գրքի արտաքին տեսքը:

Դրան հակառակ՝ Ա. Իսահակեանը<sup>22</sup> «Գիքորին» նուիրուած փոքրիկ գրախօսականում («Հորիզոն», թիւ 19, 1910) ընդգծում է պատմուածքի ձեւի ու բովանդակութեան ներդաշնակութիւնը, որով այդ պատմուածքը դառնում է եղակի բարձրարուեստ ստեղծագործութիւն հայ գրականութեան մէջ: Ա. Իսահակեանը արտաքուստ պարզ թուացող պատմուածքում նկատում է ներգործուն ուժ, քնարականութիւն, իրական կեանքի, անմիջական ու անկեղծ զգացմունքների պատկերման հա-

21 Եղիշէ Չարեանի անուան գրականութեան եւ արուեստի թանգարան,- Մարիամ Թումանեանի ֆոնդ, թիւ 880-882:  
22 Թումանեանի կենդանութեան ժամանակ Իսահակեանը նրա մասին հրատարակւած հանդէս է եկել միայն «Գիքորի» առանձին հրատարակութեան առթիւ: Պատճառը, ինչպէս նկատում է Էդ. Ջրբաշեանը, այն էր, որ «Վերնատան» խմբակի

անդամների մտերմութիւնը, ըստ երեւոյթի, թոյլ չէր տալիս ամեն առիթով հանդէս գալ իրար մասին յօդուածներով» (Էդ. Ջրբաշեան, Թումանեանը եւ հայ գրականութեան աւանդոյթները, Երեւան, 1994, էջ 220):

զուազիւտ տաղանդ: Հիացած պատմուածքի լեզուով՝ գրախօսը այն նմանեցնում է լեռնային վտակի, որի յատակում փայլելու են «նախշուն աւազահատիկները». «Ձեզ թւում է, որ դուք լսում էք խելօք երեխայի բերանից մի պատմուածք, որ անմիջապէս, անպաճոյճ բխում է նրա սրտից, բայց, ինչպէս Ֆրանսիացին ասում է, թէ թուշուհի քայլուածքից երեւում է, որ նա թուշիլ գիտէ, եւ այս միամիտ գրուածքի տողերից տեսնում էք, որ նրանց վրայով անցել է իսկական տաղանդի տիրական ձեռքը»<sup>23</sup>: Պատմուածքի արժանիքներից մեկն էլ այն է, որ այն հաւասարապէս հետաքրքիր է բոլորին՝ թե՛ մանկանը, թե՛ հասակաւորին:

Պ. Մակինցեանը «Դիմագծեր» յօդուածում յատուկ խնամքով է անդրադառնում «Գիքորին»՝ «արդի բելլիտրիստիկայում» համարելով «բացառիկ գոհար, որի նմանը ոչ ինքը Յով. Թումանեանն է արտադրել, ոչ էլ մի ուրիշ հեղինակ»<sup>24</sup>: Քննադատն ուշադրաւ դիտարկում է անում. «Գիքորը» մանկական գրոյց չէ, ինչպէս մանկական չէ Գերհարտ Հաուպտմանի «Հաննելէ» պիեսը: Մանուկներին հասկանալի ու սիրելի լինելու հանգամանքը համարելով պատմուածքի արժանիքներից մեկը՝ Մակինցեանը նկատում է, որ մանկական հոգու տառապանքը ներկայացնելը պատմուածքը դեռեւս մանկական չի դարձնում. ««Գիքոր»-ը նոյնքան մանկական գրոյց է, որքան եւ «Մարո»-ն մանկական պօէմ»<sup>25</sup>: Վերաշարադրանքով ներկայացնում է պատմուածքի առանձին դրուագներ, նկատում է, որ տողերի արանքում՝ ամենուրեք, զգալի է հեղինակի ցաւն ու վիշտը, եւ աւելացնում. «Եւ այս ստուար ու վառ դէմքերի

արանքից երեւում է սոցիալական վշտով համակուած բանաստեղծը, որը ոչ ոքի չի մեղադրում, որ ոքի չի արդարացնում, որը ոչ մի բառ չի ասում, թէ ինչ պիտի անել, ի՞նչպէս մաքառել այս ցաւի դէմ եւ ինչ միջոցներով: Որովհետեւ այդ կը նշանակէր անցնել մի այլ բնագաւառ: Բայց իր գործը բանաստեղծը կատարում է վարպետաբար»<sup>26</sup>:

Պ. Մակինցեանը Թումանեանի պատմուածքում ակնկալիքների միտում չի տեսնում, նրան վերագրում է միայն իրականութիւնը արձանագրողի դեր: «Աւելի քան տասը դէմք է պարունակում այս փոքրիկ գրոյցը, եւ բոլորը իրանց բնորոշ հոգեբանութեամբ»<sup>27</sup>, գրում է Մակինցեանը եւ փորձում առանձնացնել հոգեբանական այն անցումները, որոնք նկատելի են պատմուածքում հերոսների տարատեսակ առնչութիւնների, երկխօսութիւնների ընթացքում: «Եւ որքան երկի արտաքինը, անպաճոյճ լեզուն ու ոճը համապատասխանում են բովանդակութեանը,- շարունակում է Մակինցեանը՝ նկատի ունենալով պատմուածքի վերջին դրուագը, երբ Համբոն, Գիքորի հագուստներն առած, վերադառնում է գիւղ:- Ոչ մի շախտէյ-վախտէյական բացականչութիւն, առանց կուրծք ծեծելու, առանց ախ ու վախի, վայնասունի, արտաքուստ հանգիստ ու հասարակ լեզուով գրուցում է բանաստեղծը եւ հումորիստական, եւ ողբերգական մոմենտները: Բայց եւ այնպէս դա ստեղծագործութեան պրիմիտիւ եղանակ չէ. ոչ միայն մեծ շնորհք ու կիրթ ճաշակ, այլեւ մեծ աշխատանք է հարկաւոր այդօրինակ կատարելութեան հասնելու համար»<sup>28</sup>: Որովհետեւ այդ պարզու-

23 Իսահակեան Ա., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 11, Երեւան, 2020, էջ 188:  
24 «Գարուն» գրական-քննադատական արմանախ, գիրք III, Մոսկուա, 1912, էջ 310:  
25 Նոյն տեղում, էջ 308:  
26 Նոյն տեղում, էջ 310:

27 Նոյն տեղում:  
28 Գրեթէ նոյն միտքն է զարգացնում Էդ. Ջրբաշեանը՝ գրելով. «...Այդ բոլորի մասին Թումանեանը պատմում է առանց արտաքին շեշտման, առանց «զգայացում» մոտիվների, միշտ զարմա-

թիւնը, ինչպէս Տոլստոյի լեզուի պարզութիւնը, ձեռք է բերում ժամանակով, աշխատանքով»<sup>29</sup>: Մակինցեանն ընդգծում է թումանեանի լեզուի եւ ոճի բացառիկութիւնը, ժողովրդական մտածողութեան պարզ եւ խոր զգացողութիւնը: Միայն պէտք է նկատել, որ ինչպէս թումանեանի այս պատմութեամբ անհասարակ, այնպէս էլ քննադատի նշած վերջին դրուագում որեւէ «Հումորիստական» նրբագիծ չկայ:

Առհասարակ «Գիքորը» հայ գրականութեան գոհարներից է, որը ըստ արժանւոյն գնահատուել է ժամանակի քննադատութեան կողմից: Այսպէս՝ դեռեւս ձեռագիր թումանեանն այն ներկայացրել է Երրվանդադէին՝ իմանալու նրա կարծիքը: «Յիշում եմ այն հաճելի ժամերը, իր յուշերում գրում է Երրվանդադէին, երբ Յովհաննէս թումանեանցն իր «Գիքոր»-ի ձեռագիրը բերել էր ինձ մօտ կարգալու: Մինչ նա իր խուլ ձայնով, զգացում կարողում էր, ես մտածում էի՝ ինչ պիտի ասեմ այդ համակրելի երիտասարդին, եթէ գտնեմ, որ նրա այդ առաջին արձակ գրութեանը բանի պէտք չէ: Բարեբախտաբար, երկն այնքան զմայլելի էր, որ ես, խորապէս զգացուելով, յարձակուեցի հեղինակի վրայ եւ համբուրեցի նրան»<sup>30</sup>:

Յ. Խանզադեանը եւս գոհար է անուանում պատմութեանը. «Յովհ. թումանեանի մանկական «Գիքորը» մի այնպիսի գեղարուեստական երկ է, որի նմանը ճրագով պէտք է փնտրել մեր գրականութեան մէջ»<sup>31</sup>: Մեկ այլ առիթով Խանզադեանը գրում է. «Թումանեանը տուել է իբր թէ մանկական «Գիքորը», որի խորութիւնն ու կլասիկական պարզութիւնը մի հրաշալի

տարօրինակութիւն են մեր գրականութեան մէջ»<sup>32</sup>: Այս սեղմ բնութագրումները բաւական խօսուեն են եւ ընդգծում են «Գիքորի» բացառիկութիւնը:

Հետաքրքիր մեկնաբանական շրջանակ է ձեւաւորուում եւ «Քաջ Նազար» ստեղծագործութեան շուրջ: Դասական գրաքննադատութեան մէջ առանձնանում է Ն. Աղբալեանի «Քաջ Նազարին» նուիրուած գրախօսականը՝ տպագրուած 1912 թ. «Հորիզոնի» հմ. հմ. 232, 233-ում: Այս հեքիաթն առհասարակ հայ եւ համաշխարհային հեքիաթագրութեան մէջ ունի իր անփոխարինելի տեղը: Պատահական չէ, որ թումանեանն իր հեքիաթների մասին խօսելիս նկատել է, թէ միայն մի հեքիաթ է կարգին մշակել, եւ դա «Քաջ Նազարն» է, որը հաստատապէս կը նկատուի եւրոպական մանկական գրականութեան մէջ եւ համարձակօրէն կարող է մրցել Գրիմի «Անվախ դերձակը» ստեղծագործութեան հետ: Հեքիաթի բացառիկութիւնն անմիջապէս տեսնում եւ գնահատում է Ն. Աղբալեանը:

Գրախօսը, բազմակողմանիօրէն վերլուծելով հեքիաթը, նրբօրէն բացայայտում է նրա առանձնայատկութիւնները, անտեսանելի շերտերը՝ միաժամանակ ուրուագծելով թումանեանի ստեղծագործական աշխարհի էական յատկանիշները: Քննադատը կարեւորում է գրականութեան ու բանահիւստութեան կապը՝ համոզուած, որ ժողովրդական բանարուեստի իւրաքանչիւր հիւստուածք ենթակայ է բազմակողմանի մեկնաբանութեան: Իսկ մեկնաբանութիւնը, մայր բնագրի հեղինակային ընթերցումը կախուած է բանաստեղծի գեղագիտական ճաշակից, ազգային ոգին ըմբռնելու եւ խորքը

29 «Գարուն» գրական-քննադատական ամսանախ, գիրք III, էջ 310-311:  
 30 Թումանեանը ժամանակակիցների յուշերում, հտ. 1, էջ 385:  
 31 «Բագովի ձայն», թիւ 36, Բաքու, 1913:  
 32 «Բագովի ձայն», թիւ 80, 1913:

նախօրէն գուսպ եւ ժլատ ոճով: Իրականում, սակայն, այդ արտաքին զուգուածութիւնն աւելի է ընդգծում ողբերգականութիւնը, ստիպում է ներքուստ վերապրել եղելութեան ողջ դրամատիզմը...» (Էդ. Զրբաշեան, Թումանեանը եւ հայ գրականութեան աւանդուածները էջ 202):

թափանցելու կարողութիւնից: Աղբալեանը տանելով եւրոպական այլ տարբերակների հետ՝ Ն. Աղբալեանը յընթացս արժեւորում է Յ. թումանեանի տաղանդը: Վերջինս ոչ միայն հրաշալի է մշակել հեքիաթը, այլեւ կատարել է մի քանի յաւելումներ, որոնք լրացնում են «այն ազգային իմաստութիւնը, որով տոգորուած է Քաջ Նազարի բազմաբովանդակ նիւթը»<sup>33</sup>: Գրախօսն անդրադառնում է հեքիաթի մանրամասներին, յաւելումներին եւ դրանց՝ արտաքուստ անմեղ թուացող տողերում գտնուած թաքնուած փոխաբայութիւնը «մի դարաւոր առեղծուածի», որ ընկած է հեքիաթի հիմքում, իմաստալից պատասխաններ է տալիս դարերով հնչող հարցերին: Աղբալեանը բացայայտում է Քաջ Նազարի գոյութիւնը պայմանաւորող երկու ուժերը՝ ամբօրէն եւ բախտը: Նազարն ըստ էութեան ոչինչ չի անում փառքի հասնելու համար. նրա փոխարէն ամեն ինչ անում են ամբօրէն ու բախտը: Իսկ «բախտն այլ բան չէ, քան հանգամանքների յաջող դասաւորութիւնն եւ աննպաստի նպաստաւոր մեկնութիւն»<sup>34</sup>:

Ն. Աղբալեանը առաջադրում է կարեւոր մի հարց. «Կա՞յ արդեօք մի հիմք բուն իսկ մարդու մէջ, որ նպաստաւոր հող է դառնում այս համաշխարհային եւ ապշեցնող երեւոյթի»: Պատասխանը դրական է, որ տալիս են եւ՝ իմաստուն ժողովուրդը եւ՝ նրա հանճարեղ բանաստեղծը: Աղբալեանը նկատում է թումանեանի մատնանշած մարդկային երկու յաւերժական գծեր՝ սնափառութիւնը եւ «ուժին փարելու անբուժելի հակումը»: Նախապաշարումն ու ինքնա-

ներշնչումը կուրացնում են անգամ իսկական հսկաներին, որոնք, կեղծիքը եւ յօրինուածքը գերադասելով իրականութիւնից, ողորմելի ստահակ Վախկոտ Նազարին դարձնում են Քաջ Նազար՝ դառնալով նրա ծառան: Մարդկային արատներից սարսափելի է եւ սնափառութիւնը. անձնապատասխանութիւնը ոչ իրական միջոցով կեղծ չափանիշներ է կառուցում. մարդիկ պատրանքներ են յօրինում, անիրականն ու չեղածը իրական ու կատարուած են յայտարարում, որպէսզի հովանաւորեալ լինեն, հովանաւորութիւն վայելեն՝ ստրկանալով իրենց իսկ ստեղծած հեղինակութեանը: «Եւ այսպէս ինքնաներշնչումն ու նախապաշարումն իբրեւ պայման եւ սնափառութիւնն ու ուժին փարելու հակումն իբրեւ մղիչ, ստեղծում են Քաջ Նազարներ ու բազմեցնում գահերին»<sup>35</sup>, եզրակացնում է Աղբալեանը:

Ուշագրաւ է «Քաջ Նազարի» եւ Անդերսենի «Թագաւորի նոր հագուստը» հեքիաթների համեմատութիւնը<sup>36</sup>: Երկու գործերում էլ «մի մտաւոր կուրուութիւն, որ արդիւնք է ինքնաներշնչման՝ իշխում է ամենքին: Ո՛չ թագաւորի հպատակներն են տեսնում նրա մերկութիւնը, ո՛չ Նազարի շրջապատը՝ նրա ոչնչութիւնը»: Բայց ահա յայտնուում է մի մանուկ, որ նկատում է թագաւորի մերկութիւնը, այսինքն՝ ամեն նոր սերունդ ճանաչում է հնի մերկութիւնը: Աղբալեանը ցաւով նկատում է, որ հէնց այդ երեխան է պակասում մեզ. եւրոպական հեքիաթում մանուկն է տեսնում ճշմարտութիւնը, իսկ ասիական հեքիաթում միայն

33 «Հորիզոն» թիւ 232, Թիֆլիս, 1912:  
 34 «Հորիզոն» թիւ 233, 1912:  
 35 Նոյն տեղում:  
 36 Զուգադրելով երկու հեքիաթները՝ գրականագետ Ա. Եղիազարեանը գրում է. «Մի քիչ գուցէ անսպասելի թուայ, բայց իսկապէս Անդերսենի հեքիաթը օգնում է աւելի խորութեամբ բացայայտել թումանեանի հեքիաթի բովանդակութեան

հարստութիւնը: Այստեղ չկայ պարզապէս երեսան, եւ խաբկանքը չի բացում: Բայց պարզում է խաբկանքի էությունը, ամբիսի անբանականութիւնը, ակնյայտ իրողութիւնները տեսնելու անկարողութիւնը, խնդիր, որն այնքան յուզել է թումանեանին իր ողջ ստեղծագործական կեանքի ընթացքում» (Ա. Եղիազարեան, Այս հմտութեամբ, համաճարեղ լոնէցի... Երեսան, 2009, էջ 94):

ձին է հասկանում, թէ իրականում ով է նստած իր վրայ<sup>37</sup>: Թու՛մ է՝ ճշմարտութեան բացայայտումից յետոյ այլեւս չեն լինի մերկ թագաւորներ: Բայց... Աղբալեանը նշում է, որ նորերը տեսնում են թագաւորների մերկութիւնը, «բայց եւ ստեղծում են նոր մերկութիւններ, որ նկատում են ուրիշ մանուկ սերունդներ՝ ստեղծելով իրենց հերթին նոր փառապանծ մերկութիւն»<sup>38</sup>: Ի վերջոյ քննադատը հնչեցնում է ամենակարեւոր հարցը. «Մի՞թէ հնար չկայ բուժելու թշուառ մարդկութիւնը այս ահաւոր արատից»<sup>39</sup>: Պարզու՛մ է՝ կայ. «այս օրհասական ու համամարդկային ախտի բուժումը ոչ թէ բնազդի մէջ է, ինչպէս հրահանգում է մեր ժողովրդի իմաստութիւնը, այլ բանականութեան խելացի գործադրութեան մէջ... Իսկ այս խնդրի իրելական լուծումը մեր կարծիքով հետեւեալն է. բնազդը պայծառացած քննական մտքի աշխատանքով: Պատրանքի վիճակն անցողական է, եւ ամեն խելացի մարդ, որ տեսնում է հասնել ինքնագիտակցութեան բարձունքին, պէտք է արագ անցնէ այդ միգապատ մթնոլորտից՝ ողջունելու հոգեկան ազատութեան պայծառ արեւը...»<sup>40</sup>: Ըստ Աղբալեանի՝ «Քաջ Նազարը» ընթերցողին ներկայացնում է մարդկային փոխարարութիւնների ողջ խորքը, թաքունն ու բացայայտը եւ օգնում առաւել լաւ տեսնելու եւ հասկանալու ոչ միայն շրջապատի մարդկանց, այլեւ այն գաղափարներն ու ուսմունքները, որոնք կեղծ ու պատիր են, դատարկ ու փուչ, «սակայն աշխարհն առել են իրենց բռի մէջ եւ ծիծաղում

նրա վրայ»<sup>41</sup>: Գրախօսականի վերջում Աղբալեանը, բարձր գնահատելով Թումանեանի տաղանդը եւ նրա համար նախանշելով անանց փառք մեր գրականութեան մէջ, միանգամայն համոզուած գրում է, որ «Քաջ Նազարը» «կայ եւ կը մնայ մեր գրականութեան լաւագոյն արտադրութիւններից մեկը, որ ունի բոլոր մեծ ստեղծագործութեանց անկասկածելի կնիքը՝ լինել մատչելի եւ թելադրական մանուկին ու մեծին եւ ազգի բոլոր խաւերին»<sup>42</sup>:

Ժամանակի հեռաւորութիւնը թոյլ է տալիս ասելու՝ ն. Աղբալեանը միանգամայն իրաւացի էր. «Քաջ Նազարի» թումանեանական մշակումն իր տեսակի մէջ եզակի է, որ մնացել է չգերազանցուած եւ հաւասարապէս սիրելի բոլորին: Մեծագոչ չի հնչի, եթէ ասենք՝ ինչպէս հեքիաթն է իր տեսակի մէջ բացառիկ, այնպէս էլ աղբալեանական մեկնաբանութիւնն է եզակի. իւրաքանչիւր տողում հանճարեղօրէն բացուում է քաջնազարականութեան յաւերժական ներկայութեան դրաման, ողբերգականութիւնը մարդկային հասարակութեան մէջ, դրա խոր ու անտեսանելի շերտերը, մարդու հոգեբանութեան մինչեւ վերջ անըմբռնելի ու անմեկնաբանելի դրսեւորումները: «Քաջ Նազարը բախտի քմահաճոյքով կամ հանգամանքների բերումով՝ հասարակութեանը, կեանքին ընթացք տուող այն խելկատակներից է, որ «աշխարհքն իր բռան մէջ է առել եւ ծիծաղում

37 Լ. Հախութեանը հետաքրքիր դիտարկում է անում. «Միակ արարածը, որ Նազարի ինչ լինելը կուսումն է՝ նրա մարտական գծովն է, որովհետեւ լաւ հեծեալի սովոր եւ ոչ մի նախապաշարմունք չունեցող անասունը՝ ստեանում է վրէժն ինչ անպէտքի միճն է անստած՝ խրիւնջում է, գլուխն անում է ու թռչում առաջ, ուղիղ դէպի թշնամու բանակը»: Բայց գծովն արածն էլ Նազարին տանում է դէպի ստոյգ յաղթանակ, փառք, ապա եւ՝ արքայական գահ: Ուրեմն, ի՞նչ է սա, եթէ ոչ

բախտ, եթէ բախտ ասելով հասկանանք հանգամանքների նպատակաւոր դասաւորութիւնը յօգուտ մի անհատի» (Լ. Հախութեան, *Թումանեանի աշխարհը*, Եր., 1966, էջ 405):  
 38 Նոյն տեղում:  
 39 «Հորիզոն» թիւ 233, Թիֆլիս, 1912:  
 40 Նոյն տեղում:  
 41 Նոյն տեղում:  
 42 Նոյն տեղում:

է բոլորի վրայ...»<sup>43</sup>, գրում է գրականագէտ Ա. Վարդանեանը:

Նկատենք, որ մատենաշարը տպագրում է նաեւ թարգմանական երկեր: Դրանցից մեկն էլ Յովհ. Թումանեանի թարգմանութեամբ «Լեզուն կտրած ծիտիկը» ճապոնական հեքիաթն է, որի մասին փոքրիկ գրախօսութիւն է տպագրուում 1911 թ. «Հորիզոնի» հմ. 163-ում: Հեղինակ Մարգար Աւետիսեանը (Մար) հեքիաթի թարգմանութեան մասին գրում է. «Թէեւ գրուածքը թարգմանութիւն է անուանուած, բայց պատմելու ձեւը, լեզուն այնչափ իւրայատուկ, մաքուր հայերէն է, որ դժուար է տարբերել մեծ<sup>44</sup> բանաստեղծի ինքնուրոյն գրուածքներից»<sup>45</sup>: Հետաքրքիր է՝ Մարիամ Թումանեանը հեքիաթը չի հաւանել, ինչը առաջ է բերել Թումանեանի զարմանքը. «Մի՞թէ ճշմարիտ «Լեզուն կտրած ծիտիկը» չէք հաւանել: Դա մանկական ամենալաւ հեքիաթներից մինն է, իսկ նկարները, կարծեմ, իրենց նմանը դեռ չեն ունեցել Հայոց մանկական գրականութեան մէջ»<sup>46</sup>: Իշխանուհին հաւանաբար նկատի է ունեցել չար պառաւի դաժանութիւնը, որ ճշող տպաւորութիւն կարող էր թողնել մանուկ ընթերցողի վրայ: Թումանեանը եւս անկասկած նկատի է ունեցել դա՝ թերեւս հակառակ

կամ էթիկական դիտակէտից. անմարդկային միջադէպի վրայից շատ արագ է անցնում՝ ուշադրութիւնը ուղղելով դէպի հետեւանքները, երբ մարդկային բարութիւնը հատուցուում է բարութեամբ, իսկ չարն ստանում է իր արժանին: Ճապոնական այդ հեքիաթի ընտրութիւնը չէր կարող պատահական լինել, եթէ նկատի ունենանք, թէ որքան բծախնդիր էր Թումանեանը թարգմանութեան կամ փոխադրութեան համար հեքիաթներ ընտրելիս<sup>47</sup>:

Յ. Թումանեանը հրաշալի հասկանում էր՝ հեքիաթների թարգմանութիւնը բարդ ու պատասխանատու աշխատանք է: Գործի կարեւորութիւնն ու դժուարութիւնը գիտակցում էին նաեւ նրա բարեկամները եւ յաճախ ափսոսանք յայտնում՝ բազմազգաբազանաստեղծը դրա համար քիչ ժամանակ է ունենում: Յ. Խանգաղեանը, օրինակ, 1914 թ. մայիսի 9-ի նամակում գրում է. «Էդ հեքիաթները երեւելի գործ է մեր գրականութեան համար: Հնեց արէք, որ թարգմանութիւնը իսկապէս թումանեանական լինի. կը ներէք, իհարկէ, որ համարձակու՛մ եմ կասկածել Ձեր ուշադիր վերաբերմունքի մասին: Էնքան հոգս ունէք, որ հեշտ չի լինի բաւականաչափ ժամանակ յատկացնել

43 Վարդանեան Ա., *Յովհաննէս Թումանեանի հեքիաթները*, Երեւան, 1986, էջ 146:  
 44 Մ. Աւետիսեանը յիշում է. «1911թ. ես մի փոքրիկ գրախօսական գրեցի նրա «Մարիամեան հեքիաթների» փոխադրութեան առթիւ եւ յօդուածի մէջ գործածեցի «մեծ բանաստեղծ» բառերը նրա հասցէին: Մի քանի օրից լետոյ մի անմակ ստացաւ նրանից, որի մէջ իր տպաւորութիւններն էր յայտնում իմ այս կամ այն դիտողութեան առթիւ եւ ապա գրում էր. «Իսկ էմ բառի համար («մեծ») ակամաք եմ քաշում» (*Թումանեանը ժամանակակիցների յուշերում*, հտ. 1, էջ 179):  
 45 «Հորիզոն», հմ. 163, Թիֆլիս, 1911:  
 46 *Յովհաննէս Թումանեանի կեանքի ու ստեղծագործութեան տարեգրութիւն (1909-1914)*, Երեւան, 2016, էջ 301:

47 Թումանեանը 1922 թ. Պ. Մակիցեանին ուղղուած յուլիսի 22-ի նամակում գրում է. «Ինձ առաջարկեցին թարգմանել Գրիմի բոլոր հեքիաթները, էջը մի ոսկով, տասն ուրբի: Նայեցի Գրիմի հեքիաթները եւ յայտնեցի, որ ես միայն մի քանիսը կը թարգմանեմ: Նրանք կարծում էին, թէ փողը ինձ կարող է հրապուրել եւ տանել ուր ուզի: Էդպէս էլ արի: Մի քանիսը թարգմանեցի, դեռ նրանց մէջ էլ մի երկուսի մէջ՝ որոշ փոփոխութիւններ արի ու պատճառաբանած տուի իրենց: Կարծում եմ, թէ էն է՝ հե՛նց անունը հեքիաթ է, վերջացաւ» (Յ. Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու*, հտ. 10, Երեւան, 1999, էջ 423): Բանաստեղծի կարծիքով՝ «Գրիմները հազու մի քանի հեքիաթ ունեն մշակած: Մնացածը ժողովրդական հեքիաթներ են, խառնած, աղաւաղած ու փշաքրած» (նոյն տեղում, էջ 424):

Թարգմանութեան, ըստ հնարաւորութեան մշակման վրայ»<sup>48</sup>:

Թումանեանը յատուկ խստապահանջութեամբ էր վերաբերում «Լուսաբերի» եւ «Հասկերի» համար նիւթերի ընտրութեանը՝ դրանք փոխադրելով կամ թարգմանելով այնպիսի վարպետութեամբ, որ մինչեւ այսօր էլ ոչ միայն դեռահաս, այլեւ չափահաս ընթերցողը դրանք ընդունում է որպէս ինքնուրոյն ստեղծագործութիւններ: Վաղուց հայ մանուկ ընթերցողի համար սիրելի ու հարազատ են այնպիսի հանրայայտ գործեր, ինչպիսիք են «Փիսիկի գանգատը», «Ամենից լաւ տունը», «Թուչունի մտածմունքը», «Բզէզի դպրոցը» եւ այլն: «Դրանք իսկական եւ լիակատար իմաստով փոխադրութիւններ են,- գրում է էդ. Ջրբաշեանը,- որոնց մէջ սկզբնաղբիւրը ելակէտ է, խթանող գործօն, բայց չի կաշկանդում վերարտադրողի ստեղծագործական ազատութիւնը, որը շատ է դուրս գա-

լիս թարգմանչի սովորական «պարտականութիւնները» սահմաններից: Այս բանաստեղծութիւնների վրայ աշխատելիս Թումանեանը ըստ էութեան վարուել է ճիշտ այնպէս, ինչպէս վարում էր ժողովրդական բանահիւսութեան նիւթերը մշակելիս. նմանութեան աղբիւր ծառայած տեքստից նա շատ բան կրճատել ու դուրս է թողել, որոշ հատուածներ աւելացրել է: Կարելի է ասել, որ նա հայացրել է ոչ միայն բառերը, այլեւ ամբողջ ոգին ու ոճական հիւսուածքը՝ դարձնելով հայ մանկան համար մինչեւ վերջ հարազատ ու հասկանալի»<sup>49</sup>:

Այսպիսով՝ Մարիամ Թումանեանի նախածեռնութեամբ հրատարակուած «Մանկական գրադարան» մատենաշարը իրաւացիօրէն արժանանում է բարձր գնահատութեան. ինչպէս մատնանշում է գրախօսներից մէկը, հէնց Հ. Թումանեանի երկերի հրատարակութեան մէջ է տեսնում «մայրենի մանկական գրականութեան զարգացման»<sup>50</sup> լաւագոյն ազդակը:

48 Խանգաղեան Ց., Յօդուածների ժողովածու, Երեւան, 1963, էջ 252:

49 Ջրբաշեան Էդ., Թումանեանի գրական ժառանգութիւնը, Երեւան, 2000, էջ 116:

50 «Հորիզոն», թիւ 56, 1909:

### ԹԵՂԵՆԵԱՑ ՎԱՆՔԻ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԵՄԱՌԷՋՔԻ ՔԱՆԴԱԿԱՇԱՐԸ

Աշխէն Ենոքեան

Միջնադարեան Հայաստանի հոգեւոր-մշակութային կենտրոններից Թեղենեաց վանքը գտնւում է ՀՀ Կոտայքի մարզի Բուժական գիւղից մօտ 3 կմ հիւսիս-արեւելք, անտառածածկ տարածքում: Վանքի մասին գրաւոր յիշատակութիւններ յայտնի են դեռեւս Ը. դարից, սակայն վանական համալիրի գործունէութեան առաւել բեղուն ժամանակաշրջանը պէտք է համարել ԺԱ-ԺԳ. դարերը՝ պայմանաւորուած վանքում տեղի ունեցած շինարարական վերելքի եւ իբրեւզրչութեան կենտրոն դառնալու հետ<sup>1</sup>:

Վիմագրագետ Գագիկ Սարգսեանի դեկավարութեամբ՝ 1979-1989 թթ., իսկ որոշ ընդմիջումներով նաեւ մինչեւ 2011 թ. վանքում իրականացուած հնագիտական պեղումների արդիւնքում ի յայտ են եկել համալիրի մի շարք կառոյցներ, որոնք մասամբ կամ ամբողջութեամբ հողի եւ փլատակների տակ էին: Դրանցից է յուշարձանախմբի կենտրոնում գտնուող Կաթողիկէ եկեղեցին, որը, ըստ ճարտարապետական յօրինուածքի, մեկ զոյգ որմնամոյթերով գմբեթաւոր դահլիճ է<sup>2</sup>: Եկեղեցին թուագրւում է ԺԱ. դարով եւ աչքի է ընկնում աւագ խորանի բեմառէջքի բազմաբովանդակ հարթաքանդակներով (5,58x0,90-1,0 մ) (նկ. 1), որոնք հայկական

միջնադարեան քանդակային արուեստի բացառիկ նմուշներ են:

Քանդակագարդ սալերի պատկերադրական առանձնայատկութիւններին նախ համառօտակի անդրադարձել է Գ. Սարգսեանը, որի համոզմամբ՝ բեմառէջքը եկեղեցու առնուազն երկրորդ շինարարական փուլի արդիւնք է, որը թուագրելի է ԺԳ-ԺԷ. դարերով: Վիմագրագէտը հիմք է ընդունում նաեւ քանդակաչարի կենտրոնում պահպանուած սիրամարգի հարթաքանդակի եւ յիշեալ ժամանակաշրջանում հանդիպող արծուաքանդակների ընդհանրութիւնները՝ միեւնոյն ժամանակ յաւելելով, որ սիրամարգի պատկերն իր քանդակագարդման ոճով առաւել մօտ է ԺԷ. դարասկզբին բնորոշ թռչնաքանդակներին, երբ գերիշխող էր քարի ողջ մակերեսը տարբեր կամ նոյնանման զարդատարրերով յարդարելու եղանակը<sup>3</sup>:

Հաշուի առնելով այն, որ մասնագիտական գրականութեան մէջ արուեստի այս ինքնատիպ ստեղծագործութիւնները երբեւէ չյատուկ ու համապարփակ ուշադրութեան չեն արժանացել, ստորեւ քանդակա-

1 Գ. Սարգսեան, Թեղենեաց վանքի պեղումները (1979-1989 թթ. արդիւնքները),- ՊՐՀ, 1990, թիւ 2, էջ 174: Թեղենեաց վանքի մշակութային կեանքին աւելի վաղ անդրադարձել է Գաեւ Վ. Պետրոսեանը (Վ. Պետրոսեան, Թեղենեաց վանքը եւ նրա առաջնորդները,- «Էջմիածին», 1977, Ը, էջ 48): Յիշեալ ժամանակահատուածում վանքի մշակութային վերելքի մասին է վկայում Գաեւ 1287 թ. Թեղենեաց վանքում գրուած ձեռագիր Աւետարանի գրչութեան յիշատակարանը (ՄՄ ձեռ. 6273), ըստ որի՝ յայտնի մանրանկարիչ եւ վարդապետ (ճարտարապետ, քարգործ) Մոմիկը

մի որոշ ժամանակ այդտեղ է գործել եւ նկարագարդել տուեալ ձեռագրի գլխատաւերը. «.....Ձի գառաջին տոսսն սքանչելի, / Նկարագրեալ Մոմիկ գրչի, / Գեղաղէշ և պիտանի...» (ԺԳ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երրորդ (1201-1300 թթ), կազմեց՝ Ա.Ա. Մաթեոսեան, Եր., 1984, էջ 601: Տե՛ս Գաեւ Վ. Մաթեոսեան, Մոմիկ, Եր., 2010, էջ 12):  
2 Գ. Սարգսեան, Աշ. աշխ., էջ 180: Տե՛ս Գաեւ Վ. Պետրոսեան, Թեղենեաց վանքը իբրեւ մշակութային կենտրոն,- ՊՐՀ, 1982, թիւ 1, էջ 121:  
3 Նոյն տեղում, էջ 180-183: